



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



International Foundation
for Electoral Systems



ՇԵՆՆՄ
ՆԱԶԱՐԿՈՒՄ
ՆԱԳՐԱՅԵՄ
ՎԹԻՅԵՆՏՐԱՅԻՆ



ՆԱԲԱՐՁՅՄՈՒ ՆՈՆԾԱԾՁՎՈՅԻՆ
ՁԱՆՅՈՒՄԱՐՁՈՅԻՆ, ԲՎԵՄՐԲՁՈՅԻՆ ԱԹ
ՆԱՅՎՈՅԻՆ ՇԵՆՏՐՈՒ

Հանձնաժողովի՝ քվեատուփը և հատուկ ծրարները հսկող անդամի գործառույթները

- ▶ Մշտապես պետք է գտնվեք ընտրական քվեատուփի մոտ:
- ▶ Պետք է վերահսկեք ընտրական քվեատուփը և հատուկ ծրարները:
- ▶ Պետք է փակ պահեք ընտրական քվեատուփի մեջ հատուկ ծրարը գցելու ճեղքը:
- ▶ Ընտրողին, քվեախցիկից դուրս գալուց հետո, պետք է ցուցում տաք, որ առանձին դրված սեղանից ինքնուրույն վերցնի մեկ հատուկ ծրար և նրա մեջ զետեղի ծալված քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
Պարզաբանեք ընտրողին՝ քվեարկելուց հետո օգտագործած գրիչը անհրաժեշտ է թողնել քվեարկության շենքում տեղադրված հատուկ տարայի մեջ:
- ▶ Նրանից հետո, երբ վստահ կլինեք, որ ընտրողի ձեռքին միայն մեկ հատուկ ծրար կա, պետք է բացեք քվեատուփի ճեղքը և ընտրողին ցուցում տաք, որ հատուկ ծրարը գցի ընտրական քվեատուփի մեջ:
- ▶ Հատուկ ծրարը ընտրական քվեատուփի մեջ գցելուց հետո խնդրեք ընտրողին ազատել ընտրական տեղամասը:

Նկատի՝ ունեցեք.

- ✓ Միայն ընտրողն ունի քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ զետեղելու իրավունք: Բացառություն է «Ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողը, որի փոխարեն նրա ներկայությամբ քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ է զետեղում և ծրարը քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը, որն օգնում է նրան քվեախցիկում լրացնել քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- ✓ Թույլ չի տրվում ընտրական քվեատուփին միաժամանակ մեկից ավելի ընտրողի մոտենալը:
- ✓ Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացել լրացված քվեաթերթիկը:
- ✓ Մինչև ընտրողի կողմից քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ զետեղելը՝ իրավունք ունեք նրանից պահանջել՝ Ձեզ ցույց տալ, որ ձեռքում սահմանված քանակությամբ քվեաթերթիկ (այնպես, որ չխախտվի քվեարկության գաղտնիությունը) և մեկ հատուկ ծրար կա: Ընտրողը պարտավոր է կատարել այդ պահանջը: